1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 կոպ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամենուրեքով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ԿԻՐԱԿԻ, 4 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 268

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱԾ 1912 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 բ., 10 ամսվանը՝ 9 բ., 9 ամսվանը՝ 8 բ., 8 ամսվանը՝ 7 բ., 7 և 6 ամսվանը՝ 6 բ., 5 ամսվանը՝ 5 բ., 4 ամսվանը՝ 4 բ., 3 ամսվանը՝ 3 բ., 2 ամսվանը՝ 2 բ., 1 ամսվանը՝ 85 կ. և 15 կ. պոստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 գրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և միւնոյն ժամանակ 40 կ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիկական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան գրասենեակին հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, դեկտեմբերի 5-ին

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

Արշ. Յարութիւնեանի բենեֆիսին

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ

ԱՐԾԻՒԿ

Դրամա 5 գործ., էդ. Ռօստանի, թարգ. Ց. Տէր-Գէորգեանի
Դուքս դը Ռայխշտատի դերը կը կատարէ տիկ. ՍԻՐԱՆՈՇ
Մասնակցում է ամբողջ խումբը։
Սկիզբն է երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։
Տեղերի գները աւելացված են։ Բեմադրիչ՝ Ց. ԱԲԷԼԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Գ. Ծուրիկեան, Վ. Մամուլեան
1133. 2—2

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, դեկտեմբերի 8-ին, տեղի կունենայ ՄԻԱՅՆ ՄԷԿ

ՀԱՄԵՐԳ

ՅԱՅՏՆԻ ԵՒ ԱՆԶՈՒԳԱԿԱՆ ԵՐԳՉՈՒՀԻ
ԱՆԱՍՏԱՍԻԱ ԴՄԻՏՐԻԷՎՆԱ

ՎԵԱԼՑԵՎԱՅԻ

ՄԱՄՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Ռուսական օպերային երգիչներ Լ. Գ. ՎԱՐԴԻ (բարիտոն) եւ Ն. Վ. ՍԻՄԲԻՐՍԿԻԻ (տէնոր), նոյնպէս եւ Ա. Վ. ՏԱՍԿԻՆԻ։
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 8½-ին։
(հ.) Տոմսակները վաճառվում են թատրոնի կասայում։ 11,7. 2—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

ԿԻՐԱԿԻ, դեկտեմբերի 11-ին 1911 թ.

ՑՕԳՈՒՏ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

տեղի կունենայ ԵՐԵԿՈՅԹ

„ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԷՔԻԱԹԼ"

Դահլիճը կը ներկայացնէ առասպելական, ծաղկալից պարտէզ. հիւրասենեակը՝ café amour.
Զուտշտական մասը՝ դահլիճի բեմի վրա։
1) Գնչուների խումբ «Կենդանի դեակից», 2) Պատկերներ „Въ волнахъ страстей" օպերետից, 3) Նէապոլիտական երգեր, 4) Մի-ծաղաշարժ պատմուածքներ, 5) Բօմանսներ։
Բաղդի գուշակումն, վիճակախաղ, պոլիշվօ, տումբաչկա, ծաղիկներ, շամպայն, գինի, բուֆէտ, մանդոլինիստների խումբ, զինուորական երաժշտութիւն։
Երեկոյթի սկիզբն է երեկ. ժամը 9-ին։ ◆ Մուտքն արժէ 2 ր. 50 կ.։
Համերգ. բաժինը ղեկավարում է պ. Վալերիանով, իսկ դեկորացիայի մասը՝ նկարիչ ՏԻԲ։
առ. (հ.կ.) 1138. 3—1

Բելգիայի հանրապետի

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, թոքախտի և սրտի։
Սրսկումներ նաև տուբերկուլինների։
Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Католическая ул. д. № 10. Տելեֆոն № 792.
(ա.օ.) առ. 989. 100—45

ԲԺԻՇԿ

Դր. ՄԱԿԱՐԵԱՆ

Ներքին եւ երեխայոց

հիւանդութիւններ

Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Գանձակայա փողոց, տան Սէյլանովների, № 18, տելեֆոն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(հ.հ.կ.) առ. 819. 100—37

ԲԺԻՇԿ

Ռ. Ա. ԴԱՒԹԵԱՆՑ

Ներքին եւ ջղային հիւանդութիւններ

Ընդունելութիւնը (ցերեկվայ ժամը 12—1. ամեն օր (երեկոյեան ժամը 5—7.
Հասցէն՝ Կօչուբէեվսկայա փող. № 22.
Ելիցավետինսկայա փողոցից՝ № 44 տան տակիւն։
(հ.հ.կ.) առ. 243. 100—100

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ

Ընդունում է առամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին։ Գլօմբ, արհեստական առամներ իւրաքանչիւրը 1 բուբլի, և այլն։
Աշակերտներին և ծառայողներին 50% զեղչ։
Ընդունելութիւնը առ. ժամը 9—2-ը և 4—7-ը երեկ.
Միխայէլեան փող. № 6, մուտքը պէրէուլկայից։
(հ.հ.կ.) առ. 876. 50—37

ФАБРИКИ А.ЗНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ ИНТЕЛЛИГЕНТНЫЯ
ЦѢНА 25 шт. 15 к. 10 ш. 6 к. 100 ш. 60 к.
662. 100—72

ПАПИРОСЫ ЛЕВЪ 20 шт. 5 коп.
ФАБРИКИ А.ЗНФІАДЖІАНЦА
առ.

ПАПИРОСЫ ЭКСТРА 15 шт. 5 коп.
ФАБРИКИ А.ЗНФІАДЖІАНЦА
(հ. հ. կ.)

Ներկայ դեկտեմբերի 5-ից, Թիֆլիսում

ԲԱՑՎՈՒՄ Է

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՅԱՅՏՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Մ. Մ. Ստասիւլեվիչի

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ։
(ա.օ.) առ. 1127. 3—3

Պետերբուրգի Բժշկական Խորհրդի Նախագահ արքունի բժիշկ պրոֆ. Ն. Մ. Յտեկլովը հաղորդում է. «Իմ կատարած փորձերի հիման վրա պէտք է խոստովանեմ, որ ՅՐԱՆՑ-ԻՕՍԻՖԻ իսկական դառն ջուրը մի ուժեղ և արժանական լուծող միջոց է»։ (M. 199753) 513. 1—1

ԷՆԵՐԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

III

Մի ամբողջ տարվայ ընթացքում, երբ Իզմիրլեան կաթողիկոսի մահով՝ հրապարակի վրա դրվեց նոր կաթողիկոս ընտրելու խնդիրը, հասարակութիւնը անդադար հարց էր տալիս՝

— Ո՞վ է կաթողիկոսական թեկնածուն։

Այդ հարցով դիմում էին և մեր խմբագրութեան։

Մենք գիտակցում էինք խնդրի դժուար լուծումը և քննում էինք նրան հանգամանօրէն։ Մենք հաշուի էինք առնում թեկնածուների դրական և բացասական կողմերը, Էջմիածնի կարիքները, ժողովրդի սպասելիքները և բոլոր միւս պայմանները։

Մեզ շտապեցնում էին։

Մենք շարունակում էինք մեր ուսումնասիրութիւնները, մեր բաղդատական խորհրդածութիւնները։ Մենք քննեցինք և լուրջ կշռադատեցինք մանրամասնօրէն ամեն մի կէտ և վերջապէս երկար համեմատութիւնից յետոյ կանգ առանք Օրմանեանի վրա։

Մենք որոշ դիրք ենք բռնել։ Բայց նոյնը չենք տեսնում ուրիշ խմբերի կողմից։ Նրանք շարունակում են սնորոշ պահել թեկնածուներին։

Մեր պատճառաբանութիւնները մեր ընտրելիի վերաբերութեամբ չենք թագցրել և յայտնել ենք մեր ընթերցողներին։

Թիւրքահայ պատգամաւորները, որոնք եկել են մեր երկիրը՝ մասնակցելու մեզ հետ կաթողիկոսական ընտրութեանը, չը յայտնեցին մեզ այնպիսի նոր փաստեր, որոնք առիթ դառնային մեզ վերաքննելու մեր արած որոշումը։ Այլ ընդհակառակը։ Նրանք աւելի և աւելի համոզեցին մեզ, որ մեր որոշումը համապատասխան է հայ իրականութեան հարազատ գիտակցութեան։

Թիւրքահայ պատգամաւորների մէջ կան անհատներ, որոնք ինքնուրոյն կերպով, առանց կողմնակի թելադրանքների, չեն դնում Օրմանեանի թեկնածութիւնը։ Նրանց համար արգելափոխ նշանակութիւն չունի ոչ ազգային ժողովի առարկութիւնը և ոչ ուրիշ հանգամանք։ Այդ անհատներին մենք մի առանձին հանգամանք ենք և նրանց կարծիքը յարգում։ Բայց կան և այնպիսիները, որոնք ներքուստ ամենևին դէմ չեն Օրմանեանին և յայտնում են պէտք նա նպաստաւոր վերաբերմունք, բայց առարկում են, թէ իրանց համար դժուար է բացարձակ և բարձրաձայն դնել Օրմանեանի անունը, որովհետև ազգային ժողովը որոշ բարոյական սանմանափակում է մշակել այս խնդրի առիթով։

Այս, կաթողիկոսական պատգամաւորները լաւ գիտեն, որ ներկայ ընտրութիւնների հարազատութիւնը խախտված է թէ այն բանով, որ ազգային ժողովը կաշկանդուեցաւ է հնարել պատգամաւորների համար, և թէ այն, որ ընտրութիւնները իր առաջին շրջանում, քառանուն ցանկ կազմելու ժամանակ, գաղտնի չէ և ուրեմն ենթակայ է կողմնակի ազդեցութիւնների և ճնշումների։

Այն հանգամանքը, որ գաղտնի քուէարկութիւնը կարող է ուրիշ անսպասելի յայտնութիւններ առաջացնել, արձանագրված է և մեզ հակառակ ուղղութեան մամուլի մէջ, տակայն այն ընորոշ համեմով, թէ պէտք է ամեն միջոց գործ դնել գաղտնի քուէարկութեան անակնկալ ոչնչացնելու։

Եւ ահա մեր առաջ մի սոսկալի տեսարան։ Ժողովրդական ներկայացուցիչը եկել է իր որոշ ներքին հաւին ուրիշ հայեացքներ և գործում է կողմնակի թելադրանքներով։

Սակայն որքան ծանօթ տեսարան։ Մթթէ այդպէս չէին մեր երկրում ևս վերջին տարիները։ Մթթէ մինչև այժմ էլ դեռ չենք տեսնում նրանց արձագանքները մեր երկրի զանազան մասերում։

Մղձաւանջի թելադրանքները մեզ չափազանց յայտնի են։ Նոյն կեղծ վիճակը, նոյն երկմտրդ լինելը, նոյն երկչոտ, խուսափող խօսակցութիւնները, նոյն յղութիւները դէպի այս ու այն պատրուակը—պատմական տանջանք տառապեալ ժողովրդի։

Մենք սոսկոր ենք յարգել ամեն մի անկեղծ համոզմունք, մենք սոսկոր ենք յարգել ժողովրդական ներկայացուցչի ուրոյն ձայնը։

Եթէ այդ համոզմունքը և այդ ձայնը չեն տայ այն արդիւնքը, որ մենք ցանկանում և սպասում էինք, դրա հետ մենք հաշտվում ենք։

Բայց հաշտվել այն բանի հետ, որ մարդիկ կաշկանդված են իրանց ներքին համոզմունքը և զգացմունքը արտայայտելու—այդ երևոյթի հետ հաշտվել չենք կարող երբէք։

Ա. Քալանթար

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՇԱՐՈՒՆԻՆ ԸՆՏՐՎԱԾ ՊԱՏՐԻԱՐՔ ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ

Մենք ստացանք երէկ Կ. Պոլսից մեր սեփական թղթակցից մի հեռագիր, որ ծանուցանում է, թէ նոյեմբերի 30-ին գումարված ազգային երեսփոխանական ժողովը ընտրել է պատրիարք Թիւրքահայերի Արշարունի արքեպիսկոպոսին, 54 ձայնով։

Ուրեմն, վերջապէս լուծվեց Թիւրքահայոց պատրիարքի ընտրութեան հարցը և յաղթանակը տարաւ ազգային երեսփոխանական ժողովի մեծամասնական հատուածը կամ կենտրոնի խմբակցութիւնը, որի ընտրելին էր Արշարունի արքեպիսկոպոսը, իսկ դաշնակցականների խումբը կրեց պարտութիւն։

Յովհաննէս Արշարունի արքեպիսկոպոսը, որ Իզմիրլեան պատրիարքից յետոյ ընտրվեց պատրիարքական տեղապահ մինչև Դուրեան սրբազանի ընտրութիւնը, կարողացաւ գրաւել իր վրա հանրային ուշադրութիւնը նրանով, որ հանդիսացաւ սաստիկ հակառակորդ ժամանակակից խուժանապետութեան, որով և նրա ներկայ ընտրութիւնը յոյժ նշանակալից է։

Դեռ չունենալով մանրամասնութիւններ, անկարող ենք իմանալ, թէ հակառակ քանակը ում ընտրելիութիւնն է առաջ քշել, որովհետև ենթադրելով, որ ընտրութեան օրը ազգային ժողովին մասնակցած լինեն գոնէ 80 երեսփոխաններ, պէտք է ուրեմն ընդունել, որ հակառակ քանակը ունեցել է գոնէ 26 ձայն։

Նոր պատրիարքի մասին առ այժմ ոչինչ ասել չենք կարող, որովհետև որքան էլ նրա հակադաշնակցական լինելը դրական արժանիք է, քանի որ դա տալիս է ողջմիտ և ուղղամիտ և ոչ յախուռն գործունէութեան գրաւական, որքան էլ այն ժեստը, որ մի անգամ Արշարունու տեղապահութեան ժամանակ, երբ Շահրիկեան ըստ հաճոյս անօրինում էր ազգային գործերը, երևակայելով իրան աշխարհական պատրիարք, կատարել է Շահրիկեանի հասցէին, յայտարարելով թէ՝ «պ. Շահրիկեան, ես պէտք չունիմ սպասաւորի», երբ սա անկոչ կերպով կամեցել է մտնել տեղապահի կառքը և նրա հետ արքունի պալատ գնալ,—որքան էլ, երկնում ենք, այդ ժեստը ցոյց է տալիս Արշարունու մէջ նկարագիր, բայց և այնպէս պէտք է սպասել, թէ ինչ շինարար, ստեղծագործական գործունէութիւն ցոյց կը տայ նորընտիր պատրիարքը յօգուտ և ի բարգաւաճումն Թիւրքիայի հայ ժողովրդի։

Առայժմ ողջունել պէտք է Արշարունի սրբազանի ընտրութիւնը, որովհետև դրանով վերջ է դրվում այն ապիկար և ապէտաբեր կառավարութեան, որ ներկայացնում էր Թիւրքահայոց ազգային գործերի ղեկավարութիւնը յանձին Մանկունի արքեպիսկոպոսի, որը պսակվեց հաչակաւոր մի ակտով — էջմիածնական-հօրիզոնական բաւաւորների» ցուցակով կաթողիկոսական ընտրութեան հարցում։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

2 դեկտեմբերի

Դէլի.—Թագաւորական զոյգը դրեց նոր ժայրաքաղաքի հիմքը։

—

Վիէննա.—Եկաւ բուլգարական թագուհի Էլէօնորան։ Ամենդարեայում Բաբի մօտերը քարով ջարդել են թագուհու սալօն-վագոնի պատուհանը։

—

Սոֆիա.—Ազգային ժողով։ Դէշովը պատասխանելով Ֆերդինանդ թագաւորին և Ֆրանց-Յովսէփ կայսրի ունեցած տեսակցութեան մասին ուղղած հարցապնդման, ասաց, որ տեսակցութիւնը կրում էր ընտանեկան քնաւորութիւն և զուրկ է քաղաքական նշանակութիւնից. յամենայն դէպս կառավարութիւնը պատասխանատուութիւն է յանձն առնում տեղի ունեցած բանակցութիւնների համար։

Պատասխանելով Իշտիբի կոտորածի մասին եղած հարցին, Դէշովը պատասխանեց, որ դեսպան Սարաֆովից տեղեկութիւն է ստացվել, թէ Բ. Դուռը խոստացաւ պատժել յանցաւորներին և յանձնեց քննութիւնը զինուորական դատարանին։ Դէշովը աւելացրեց, որ կառավարութիւնը կը կատարէ իր պարտականութիւնը Իշտիբի վերաբերութեամբ և գօրնէ Մակեդոնիայից փախչող կարօտեալներին։ Կառավարական շրջաններում գոհ են նրանից, որ Բ. Դուռը ճանաչում է յօգուտ Բուլգարիայի մօրալ իրաւունք՝ հետաքրքրվելու Մակեդոնիայի դրութեամբ։

—

Բուդապեշտ. — Լրագրները առանց ուղղութեան խարութեան շարունակում են բացասաբար վերաբերվել Խօրվատիայում տիրող ընտրողական տէրրօրի առիթով։

—

Լօնդօն.—Ռէյտէրը հերքում է այն տեղեկութիւնը, իբր Կոնստանտի պրինցը պաշտօն է ստանձնելու Հնդկաստանում։

—

Վիէննա.—Դալիցիայի պատգամաւորներ Բրէյտէր և Ռէյտոչէս հերթական առաջարկութիւն արին պատգամաւորների պալատին, թէ անհրաժեշտ

է աստրօ-ունգարական արտաքին գործերի մինիստրության համար քայլեր անել 1815 թվի պայմանագիրը ստորագրած պետությունների առաջ, որպէսզի լեհական թագաւորության սահմանները[illegible] անձեռնմխելի՝ համաձայն Վիէննայի կոնգրէսի որոշման։

—

Լօնդօն.—«Թայմսը» հրատարակեց 32 երեսից բաղկացած մի յաւելուած ռուսական արդիւնաբերության ու ֆինանսների մասին։ Մեկնելով Ուէլլէսը առաջնորդող յօդուածում մասնաւորապէս նպաստաւոր է Անգլիայի և Ռուսաստանի միջև տնտեսական ու հասարակական մերձեցում առաջ բերելու համար, որովհետև հին քաղաքական մրցումը վերջացել է։

ՄԻՐԶԱ-ՖԱՏԱԼԻ ԱԽՈՒՆԴՈՎԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

—

Թիֆլիսի մահմեդական հասարակությունը որոշել է դեկտեմբերի 5-ին տօնել մահմեդական առաջին դրամատուրգ Միրզա-Ֆատալի Ախունդովի յոբելեանը։ Դրա համար Թիֆլիսում կազմված է յոբելեանական յատուկ մասնաժողով դեն.-մայոր Էմիր Բեգզադ-Միրզայի նախագահությամբ։

Դեկտեմբերի 5-ին, յոբելեանի տօնակատարության օրը, շիաների տեղական մեչեդում կը կատարվի հոգեհանգիստ Ախունդովի յիշատակին, իսկ նոյն օրը երեկոյեան Վրաց թատրոնում տեղի կունենայ ներկայացում Թուրքերէն լեզուով։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
1 դեկտեմբերի

Լօնդօն.—Դրէյը Մարօկկոյի առիթով մատնանշեց, որ գերմանական կանցլերի ասելով մարօկկեան հարցը վերացված է։ Այդ պէտք է մաքրել դիպլօմատիայի ճանապարհը։ «Եթէ Ֆրանսիան և Գերմանիան իրանք հարթեն վիճելի հարցերը, մենք միայն ուրախանալ կարող ենք, որ հնարաւորություն ենք ստանում օգտվել ճանապարհները մաքրելու»։

Ժամանակաւոր մինիստրությունը 11 հազար ֆրանկի մրցանակ յատկացրեց պատերազմական օդագնացների միջազգային մրցում սահմանելու համար։

«Լիվերպուլի Կուրիէրի» թղթակիցը հաղորդում է, որ գարնանը, երբ հէնց Հնդկաստանի կենտրոնական վարչությունը փոխադրվի Դէլի քաղաքը, փոխարքայ կը նշանակվի Կոնոտուի պրինց Բաղատուր։ Մինիստրություն։ Ենթադրվում է, որ Հնդկաստանի փոխարքայ այսուհետև միշտ էլ կը նշանակվի թագաւորական տան անդամներից։

Դրէյը պարսկական գործերի մասին ասաց. «Անգլօ-ռուսական համաձայնությունը չապահովեց Պարսկաստանի անկախությունը։ Նահին արտաքսելուց յետոյ ամբողջ ժամանակ տեղի էին ունենում փոխադարձ մաքերի շփումներ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև։ Քանի բրիտանական շահերը շօշափված չեն, մենք չը պէտք է պարզաբանվենք այդ վէճերի նշանակության մասին»։ Մասնաւորապէս Նուստէրի մասին Դրէյը ասաց. «Եթէ ես պաշտպանէի Նուստէրին, ես կը խախտէի անգլօ-ռուսական համաձայնության ոգին»։ Դրէյը ընդգծեց, թէ անհրաժեշտ է, որ Պարսկաստանը նախօրօք տեղեկանայ ռուսական և անգլիական միասնների կարծիքները օտարազգի խորհրդականներ նշանակելու դէպքերում։ Ոչ Ռուսաստանը, ոչ Անգլիան բայց և այնպէս չը պէտք է աւելորդ դժուարություններ ստեղծեն Պարսկաստանի դէմ, երբ վերջինս կը ձգտէ ունենալ ընդունակ օտարազգի խորհրդատուներ»։ Ռուսաստանի ծախքերը հատուցանելու առիթով Դրէյը ասաց. «Պարսկաստանը անկարող է ներկայումս վճարել պահանջվող գումարը։ Թէև ես չեմ կարծում, թէ Ռուսաստանը կը պնդէ անյապաղ վճարելու վրա, սակայն ցանկալի չէր լինի, որպէսզի Պարսկաստանի վրա ծանր պարտականություն դրվէր։ Վարձատրության վճարումը վնասակար ազդեցություն կունենայ անգլիական առևտրական շահերի վրա, որովհետև հարաւային ճանապարհների պաշտպանությունը դրամ է պահանջում։ Ես այդ մասին տեղեկացրի ռուսաց կառավարությանը։ Վարձատրության հարցը կարողվի լուծել, եթէ Ռուսաստանի պահանջներին Պարսկաստանը բաւարարություն տայ սկզբունքով և եթէ Ռուսաստանը վստահություն տանայ, թէ գոյություն ունի պարսկական կառավարություն, որ յարգում է ռուսական ու անգլիական շահերը, ձգտում լուծելուց յետոյ մեր քաղաքականությունը պէտք է ստեղծագործիչ լինի։ Վերջում հարկաւոր է դիտցնել Պարսկաստանին փոխադրությունը կնքելու»։ Ռուսական զօրքերի տեղափոխությունների և դէպի Նախկին շահը եղած վերաբերմունքի հարցի վերաբերմամբ նա իրազեկ է եղած ռուսաց կառավարությունից։

Եզրակացնելով Դրէյը մատնանշեց այն կարևորությունը, որ ունի ռուս-անգլիական կօպերացիան պարսից կառավարության համար։

Դրէյի ճառը ընդունվեց ծափահարությամբ։ Յետոյ զանազան արմատական հռետորներ խստագոյնս պարսաւեցին անգլիական և ռուսական կառավարությունների գործելակերպը։

ՄԱՐՕԿԿՕՅԻ ՀԱՐՑԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
2 դեկտեմբերի

Պարիզ.—Մարօկկեան հարցի առիթով գը-Սէլվը ասաց. «Մենք խնդրում ենք Սպանիային վշտակցել Մարօկկոյում ունեցած մեր գոհերի համար, բայց մատծում ենք նաև Սպանիայի արժանապատվությունն ու հպարտությունը խնայելու մասին։ Մենք սրբեցինք մարօկկեան հարցի շախմատի գրատախտակը, որը կարող էր մշտապէս միջազգային առարկայ բոլոր արտաքին դէպքերին հաշտարար ոգով։ Այդ պատճառով նա կամենում է ամրապնդել բարեկամական յարաբերություններն ու պաշտօնակցությունները»։

Գաղութների մինիստրը պատասխան բացատրեց, որ Ֆրանսիան պահեց Լիբրէվիլը և Միջին Կոնգոն, ի նկատի ունենալով այդ շրջանների հարստությունները։ Մուտքը դէպի աֆրիկական տիրապետությունները մնում է ապահովված՝ համաձայնությունից յետոյ էլ։ Հարկ չը կայ չափազանցել զիջած շրջանների նշանակությունը։ Զոնաբերությունը չէ խախտում Ֆրանսիական գաղութային տիրապետությունների շահերը Աֆրիկայում։

Սօցիալիստ Վալիանը ողջունում է մարօկկեան համաձայնությունը, որ ցրեց պատերազմի ուրուականը։ Նա պէտք է շաղկապող օղակ ծառայէ Անգլիայի և Գերմանիայի միջև և մերձեցում առաջ բերէ Ֆրանսիայի, Անգլիայի և Գերմանիայի միջև։ Ֆէրրին կարծում է, որ համաձայնությունը առաջ կը բերէ մեծ գժուարություններ և հնարաւորություն կը տայ Գերմանիային վերստին ազդեցություն ձեռք բերել Մարօկկօյում։

ԹԻՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
2 դեկտեմբերի

Հռոմ.—Նուստով հրատարակվելու է մի հրավարտակ մինչև դեկտեմբերի 31-ը 25 միլիոն լիր յատկացնելու մասին Տրիպոլիսի պատերազմական ծախքերի համար։ Մինչև օրս զինուորական և ծովային մինիստրություններին յատկացված է 90 միլիոն։

—

Հռոմ.—Տաղուրան հեռագրով միացվեց Տրիպոլիսի հետ։ Ազիզիէյից դէպի հիւսիս ամբողջ տարածությունը մաքրված է թշնամուց։ Թիւրքերի մի մասը գտնվում է Գանանում, միւս մասը՝ Ազիզիէյում։ Թիւրքերի մէջ զբաղվում են դեռ 100 արաբ Զէբէլղավիից։

—

Հռոմ.—Նէապոլից եկաւ արաբների ձեռքով վիրաւորված «Ցանի» թղթակից Ժան Կարրէրին, որին կայարանում դիմաւորեց հարիւրհազարաւոր հանդիսատեսներ բաղկացած ամբոխը։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԻՒԵԼՔՈՒՄ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
2 դեկտեմբերի

Շիքագո.—Իւանշիկայի պատգամաւորի բանակցությունները տեղական յեղափոխական զօրքերի հետ ոչինչ արդիւնք չունեցան։ Ցինդաօսի լրագրները հաղորդում են, որ երեսում են բօկսերային կազմակերպությունների նշաններ։

—

Շանխայ.—Զէմանը ուժեղ զօրքով գտնվում է Ցունչժօուլում։ Նա Իւանշիկայից ստացաւ 100 լան։ Զինական տեղեկությունների համաձայն, Պուկօուսի երկաթուղին մտադիր է իրան չէզոք յայտարարել։

Նանկինում զինուորական արշաւանքի են պատրաստվում դէպի հիւսիս։

Ղանկօու.—Զինական լրագիրներում տպված է վաճառականների կոչը եւրօպացիներին՝ փող չը տալ չինական կառավարության, որպէս զի պատերազմը չը շարունակվի, որ մեծ վնաս է հասցնում վաճառականությանը։ Երկրի հարստությունները գտնվում են յեղափոխականների հսկողության տակ, այդ պատճառով Պէկինը չէ կարող եւրաշնորհել փոխառությունների հա[illegible] տուող երկրների ապրանքները բոյկոտի ենթարկել։

Եկան անգլիական 160 զինուոր երկու թնդանօթով։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅԱԿ ԿԻԼԻԿԵՑԻՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ

—

Ամերիկահայ հայերից նրանք, որոնք Կիլիկիայից են գաղթած այդ երկիրը, նոյեմբերի 23-ին (ն. տ.) մի առանձին զրուցությամբ դիմել են Կիլիկիայի կաթողիկոս Սահակ Խապայեանին, խնդրելով որ սա արտօնէ, որպէսզի իրանք՝ ամերիկանակ կիլիկեցիներն ունենան իրանց ուրոյն եկեղեցին, առաջնորդն ու եկեղեցական պաշտօնեաները, որոնք ոչ մի կապ կամ կախում չունենան Էջմիածնից և ենթարկվեն բացառապէս Կիլիկիայի կաթողիկոսությանը։

Ստորև ասում են պատճէնն այդ դիմումի, որին ստորագրել են 55 հոգի և որը վաւերացված է Ուստրի հայ հոգաբարձությունից։

Շնորհազարդ Տէր-Սահակ կաթողիկոս Տանն Կիլիկիոյ ի Սիս.

Սրբազնազոյն Հայրապետ.

Ամերիկահայ կիլիկեցիներս յընթացս ամսոյս հոգի վրա լուռ գալաբվելով։ Այդ տերևներն են կանաչ, երևուն... Ժամանակն անցաւ ու նրանց կեանքը լրացաւ մահվան մի շնչով։

Օ՜, լուռ, լուռ կացէք և ձեր սուգը երգեցէք անձայն, մութ գերեզմանում յաւիտենականության մէջ։

Լուռ, ձեր հառաչանքը բզկտում է սիրտս, և ծածկված վէրքերը բացվում են։ Նոր են ծածկվել սրտիս վէրքերը, ու թաղէք, որ անձայն հանգչեն, թաղէք մոռացությունը պատէ նրանց։ Ա՜խ, մի վանէք մոռացությունը. թող ծածկէ, ամեն ինչ...

Աշուն է... Լուռ կատարեցէք բոլորդ ձեր յուզարկաւորությունը։ Պէտք չեն ձայներ։ Ձայներից զարթնում են մոռացության մէջ փաթաթված, շատ-շատ յիշատակներ ու հառաչում են, հառաչում անզուսպ։

Չէ՞ որ հեռու չէր այն օրը, երբ երջանկություն էր գրկելու ինձ։

Օ՜, լուռ, լուռ... Աշուն է, ու բոլորդ անձայն կատարեցէք ձեր թաղումը։

Ձայները հին, հին յուշեր են զարթեցնում...

II

ԶՄՐԱՆ ՄԵՂԵԴԻՆԵՐ

Ա) Մի որ...

Ջը գիտեմ այսօր ինչու՝ յանկարծ ինձ պատեց սոսկալի յուսահատություն ու սիրտս ճմլվեց, ցաւալի գալարումներով սկսեց տառապել և հեքը զսպած՝ հառաչել։

Ով գիտէ, գուցէ թաւիշ ձիւնի մանրիկ փաթիլներն են պատճառը, որոնք, թափվելով այսօր՝ առաջին անգամ, յիշեցրին կեանքիս անցեալից մի պատկեր։

Բայց ինչու՞ սիրտս գալարվում ու կծկվում է։ չէ՞ որ այն վաղուց, շատ վաղուց էր, երբ ես զգում էի իմ երջանկությունը և խելայեղօրէն առաջ էի վազում ուշք չը դարձնելով պատուարներին։ Բայց այն վաղուց անցել է։

Մի օր աշնանը՝ կռունկները թռան խմբով, խլեցին ինձնից իմ երջանկությունը ու գնացին հեռու, անապատների լռության, սրբազան խաղաղության մէջ թաղելու այն՝ աւանդների տակ։ Եւ այժմ նա՝ իմ երջանկությունը երկրի անդունդներում ով գիտէ յիշում է ինձ։

Ո՛չ, ո՛չ, նա, է, տարիներ առաջ մոռացել է ինձ։

Եւ այժմ՝ երբ կրթնած սեղանին, սենեակի մենակության մէջ պատուհանից նայում եմ ոլորապտոյտ ցած իջնող ձիւնի փաթիլներին, զարթնում է կամաց-կամաց հինը։

Ձիւնը յետ է մղում խաւարն ու նրա գրկից դուրս է քաշում մոռացվածը։

Թող, թող... Մի օր կռունկները առան նրան ու տարան անապատի աւազներում թաղելու։

Այս եզրակացությունը լոկ խօսքերով չէ արել «Հօրիզօնը», այլ ակնարկելով թվերի և հաշիւների վրա։ Եվ որովհետև այժմ մեզանում են գտնվում թիւրքահայ պատգամավորները, որոնք հավանօրէն մօտ ծանօթ չեն ռուսահայոց վիճակագրության, ուստի և հնար չունեն անձամբ տատգելու իրերի իսկական վիճակը, մենք հարկ ենք համարում հարցը պարզել մանրամասն վիճակագրական թվերով և թիւրիմացությունը վերացնել, որպէս զի առաջիկայում մեր ցուցումները ռուսահայոց ստվար մեծամասնության ցանկությանն վրա՝ յենակէտ ունենան անկասկածելի թվեր։

Բայց նախ՝ մի քանի խօսք, թէ ինչպէս է եկել «Հօրիզօնը» իր եզրակացությանն, որ վերը բերինք։

Նա գտնում է, որ «Ռուսաստանի հայերի թիվը մօտ մէկուկէս միլիոն է համարվում։ Այդ քանակությունից կէսից ավելին, մօտ 800,000, Երևանի թեմին է պատկանում, որ բացարձակ կերպով մերժել է Օրմանեանի թեկնածությունը։ Նշանակում է՝ ռուսահայերի կէսից ավելին դէմ է Օրմանեանի կաթողիկոսությանն»։ Բայց որովհետև Ալէքսանդրոպոլի վիճակը օրմանեանական է հռչել, ուստի «Հօրիզօնը» զիջում է «դուրս ձգել Երևանի թեմից Ալէքսանդրոպոլի վիճակը, մօտավորապէս 40,000 հոգի»։ «Այս թվից շատ է նվազում Երևանի թեմի նշանակությունը։ 40,000-ը 800,000-ի մէջ ինչ նշանակություն ունի, եթէ ոչ $^1/_{20}$-ի նշանակություն»։

Թէ որտեղից է վերցրել «Հօրիզօնը» իր տեղեկությունները Երևանի թեմի 800 հազար և Ալէքսանդրոպոլի վիճակի 40,000 հայ բնակչությունների մասին, դժբաղդաբար չէ ասում։ Եվ մենք չը գիտենք այդպիսի տեղեկություններ պարունակող որևէ աղբիւր։ Իսկ պաշտօնական ճիշդ տեղեկությունները, որոնք դուրս են բերված 1897 թվի մի օրեայ մարդահամարի տվեալներից, հետևապէս են ասում.—1897 թվին Երևանի նահանգի ամբողջ ազգաբնակության թիվը եղել է 804,757 (իսկ ըստ դավանական ցուցակի՝ 829,550), որից երկու սեռի հայերի (լուսավորչականների) թիվը եղել է 433,682 (բայց ոչ թէ 800,000)։ Ըստ նոյն տվեալների՝ Ալէքսանդրոպոլի վիճակի հայերի թիվը եղել է 136,652 (բայց ոչ մօտ 40,000)։ Ըստ երևոյթին՝ «Հօրիզօնը» Երևանի նահանգի ամբողջ ազգաբնակության թիվը (որի մէջ մտնում են ի մէջի այլոց 352,000 մահմեդականներ) նոյնացրել է հայ ազգաբնակության հետ, այնպէս էլ Ալէքսանդրոպոլ քաղաքի բնակչության թիվը (32,018) շփոթել է Ալէքսանդրոպոլի վիճակի թվի հետ (136,652)։

Այս սխալմունքներն ուղղելուց յետոյ կունենանք հետևեալը։

Երևանի նահանգը իր 199,099 հայ լուսավորչական ազգաբնակությամբ կազմում է ռուսահայոց ընդհանուրը հայ լուսավորչական ազգաբնակության (որը է ըստ նոյն ավանդների 1,179,622) $^2/_5$-ից էլ շատ պակաս (0,368), և ոչ թէ կէսից ավելին։ Ալէքսանդրոպոլի գավառի հայ ազգաբնակությունն էլ կազմում է Երևանի նահանգի հայ ազգաբնակության գրեթէ $^1/_3$-ը (0,315) և ոչ թէ մի քանիորդը։ (Երևանի թեմի հայ ազգաբնակության մասին քիչ յետոյ)։

Թիֆլիսի թեմի վերաբերությամբ «Հօրիզօնը» նկատում է, որ «օրմանեանական պատգամավոր ընտրողը եղել է գլխավորապէս Թիֆլիսը, մինչդեռ մի շարք վիճակներ, այսինքն համարեա ամբողջ գավառը, որ պարունակում է իր մէջ Թիֆլիսի թեմի հայ ազգաբնակության մեծամասնությունը, սև քվէ է տվել օրմանեանական պատգամավորին։ Նշանակում է որ Թիֆլիսի թեմի ազգաբնակության մեծամասնությունն էլ չէ ցանկանում Օրմանեանին»։

Անպարտ բան է գաղտնի քվէարկության գործում երևան հանել, թէ տրված քվէներից որը ով է տվել։ Բայց երբ «Հօրիզօնը» այդ արել է, մենք էլ, իրողու-

Բ) Սեմեռ կը մնայ

Մտամոլոր ու յուսաբեկ, մտածումների անկուսափելի ծանրության տակ շրջում էի, երբ անցար դու։

Վշտի անհունը ընդգրկած խորունկ հայեացքիդ մէջ, ճնշումի անձուկ քողով պատուրված, անցար դու յաւիտեան, այն ժամանակ, երբ մթնները ալրում, նեռվում էին կեանքի ճահճի մէջ, երջանիկ համբերով իրանց ու անզուսպ հոնդալով քո ետևից։

Դու անցար, բայց քո օդեղէն, անձեռագործ ու միայն մտքի անընդունարելի թարուչքով գծված պատկերը մնաց իմ առաջ և տպվեց հոգուս մէջ։

Հոգիս, որ իր բիւր ծալքերում անթիւ գաղտնիքներ ունի, որոնք օտար են մարդոց, դէն հրեց ամեն ինչ ու ընդգրկեց միայն քո պատկերը։

Եւ այն անմեռ կը մնայ այնտեղ, որպէս այն փունջը ծաղիկների, որը դու քո անցնելու ժամանակ ինձ տուեցիր, որպէս յիշատակ՝ գարնան առաջին ցօղով ծածկված քո սրտի։

Քո պատկերը անմեռ կը մնայ իմ հոգում, որպէս այն ծաղիկները, որոնք աճում, ուռճանում են կրծքիս վրա, և որպէս քո քնքոյշ մարմնից բուրող ջերմությունը՝ խնկարկում են ինձ...

Արշալոյս Տէր-Յովհաննեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՒԱԳՆԵՐ

I

ԱՇՆԱՆ ԵՐԳԵՐ

Ա) Ես սիրում եմ աշունը

Ես սիրում եմ աշունը մենութեան ու խաղաղության մէջ երեկոյեան պահուն, երբ պատուհանիս եռանքամին է հեծկլտում միայն ու երգում տխուր, տխուր։

Թախծի ու վշտի երգն է այն, որ իր ծանրության տակ սրտերը ճմլում, փոշիացնում ու գնում տարածվում է անսահմանության մէջ։ Նա անընդկրկելի, անըմբռնելի է իր ամբողջ վեհությամբ ու հզորությամբ։

Գեղեցիկ է երկինքը իր մռայլ դէմքով, որ կարծես անձուկի կուտակումից ճնշված՝ խորհրդվել ու պատրաստվում է պոռթկալու։ Նրա ահեղ գոչիւնը սարսափ է ազդում բոլոր սրտերին, բայց ես սիրում, ես պաշտում եմ այդ որոտը։ Նա թեթևացնում, փարատում է իմ թախիծը, որովհետև կար մէկը, որի պոռթկումն էլ նման էր աշնան մռայլ երկնքի գոչիւնին, և ես սիրում էի նրան։

Նա գեղեցի՛կ էր, գեղեցիկ ու մաքուր, որպէս սարի գագաթին խմբված սպիտակ ամպերը, հեռու ամեն տեսակի հպումներից։

Ցանկանք էր փայլում նրա դէմքին ու աչքերում ցոլում էին վիշտն ու թախիծը, որպէս լճի մէջ անդրադարձած աստղիկներ, իրանց ողջ գաղտնիքներով։

Ես սիրում էի նրան, որովհետև նա գեղեցիկ էր, երբ գրկած մեռնող տերևները օրօրում, հառաչում էր, և նրա վշտի ծանրությունից զոլում էին ծառերի մերկ ճիւղերը, կծկվում գարաւոր կաղնիները։

Եւ երբ ամուր, ամուր սեղմում էի նրան սրտիս, ոչ թէ ընդգրկում էի նրա սքանչելի մարմնի ջերմությունը, այլ զգում էի, որ նրա տառապանքները մէկիկ-մէկիկ խլում եմ ու կուրծքս ուռչում է։

Օ՜, տառապանքը... մենակության քաղցը բոպէների միակ ընկերը, որը թմրեցնում ու անսահման երջանկության ցանկություն իրագործումն է գծագրում։

Օ՜, սքանչելի է աշունը իր խաղաղությամբ ու մենակության մէջ մեռնող տերևներով, որոնց համար օրհներգ է երգում խենթ քամին հազար բերանով։

Այդ ժամանակ զարթնում է տառապանքը և պարուրում է ինձ ու ես պանում եմ հրաշալիքների դարը։

Բ) Լ ո՛ւ ռ

Աշունն է։ Ցուրտն ու խաղաղությունը մեռելության թևերով տարածված են ամեն կողմ, ու քամին կատաղի պանում է՝ ձմրան սարսափը երգելով։

Ո՞վ է հառաչում այնտեղ, պատուհանի տակ սառը հողի վրա լուռ գալաբվելով։ Այդ տերևներն են կանաչ, երևուն... Ժամանակն անցաւ ու նրանց կեանքը լրացաւ մահվան մի շնչով։

Օ՜, լուռ, լուռ կացէք և ձեր սուգը երգեցէք անձայն, մութ գերեզմանում յաւիտենականության մէջ։

Լուռ, ձեր հառաչանքը բզկտում է սիրտս, և ծածկված վէրքերը բացվում են։ Նոր են ծածկվել սրտիս վէրքերը, ու թաղէք, որ անձայն հանգչեն, թաղէք մոռացությունը պատէ նրանց։ Ա՜խ, մի վանէք մոռացությունը. թող ծածկէ, ամեն ինչ...

Աշունն է... Լուռ կատարեցէք բոլորդ ձեր յուզարկաւորությունը։ Պէտք չեն ձայներ։ Ձայներից զարթնում են մոռացության մէջ փաթաթված, շատ-շատ յիշատակներ ու հառաչում են, հառաչում անզուսպ։

Չէ՞ որ հեռու չէր այն օրը, երբ երջանկություն էր գրկելու ինձ։

Օ՜, լուռ, լուռ... Աշունն է, ու բոլորդ անձայն կատարեցէք ձեր թաղումը։

Ձայները հին, հին յուշեր են զարթեցնում...

II

ԶՄՐԱՆ ՄԵՂԵԴԻՆԵՐ

Ա) Մի որ...

Ջը գիտեմ այսօր ինչու՝ յանկարծ ինձ պատեց սոսկալի յուսահատություն ու սիրտս

թիւնը պարզելու համար, մի քանի թվեր դարձեալ բերենք։

Թիֆլիսի թեմը, ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք, ունեցել է (1897-ին) 329,303 հայ ազգաբնակութիւն։ Բացի Թիֆլիս քաղաքից, որի օրմանեանականութիւնը ընդունում է «Հօրիզոնը», օրմանեական պատգամավորին ձայն են տուել Գանձակի, Ղազախի և Ախալցխայի վիճակները (չեմ յիշում Թուշէթը, Ցիխինվալը, Սղնախը և այլն)։ Գումարելով այս չորս ընդարձակ վիճակների հայ ազգաբնակութիւնը, այն է Թիֆլիս քաղաքի 65,381, Գանձակի 43,113, Ղազախի 44,050 և Ախալցխայի 20,190, կը ստանանք 172,734 հայ ազգաբնակութիւն, որ կազմում է թեմի հայ ազգաբնակութեան կէսից ավելին և ոչ կէսից քիչը։ Բայց պէտք է մի ուղղումն էլ մտցնել, այն է՝ որ քաղաքների ազգաբնակութեան թիվը զգալի կերպով աճում է ի վնաս գաւառի։ Թիֆլիսը 1886-ից մինչև 1897՝ աճել է 105 տոկոսով, այսինքն ուելի քան կրկնապատկվել է։ Նոյն հիմանց վրա 1898-ից մինչև 1911-ը՝ 65,381 թիվը պէտք է դարձեալ կրկնապատկված լինի, և յիրավի՝ ըստ հեղինակաւորը վայրութիւնների՝ ներկայումս Թիֆլիսի հայ ազգաբնակութեան թիվը կազմում է 130,000, որի վրա ավելացնելով վերը յիշած վիճակների հայ ազգաբնակութեան թիվը՝ կը ստանանք իւրաքանչիւր մեծամասնութիւն Օրմանեանին ցանկացող հայ ազգաբնակութեան։

Բեսարաբիայի թեմի մասին «Հօրիզոնն» ասում է, թէ «այդտեղ օրմանեական պատգամավոր ընտրվել է մի ձայնի առավելութեամբ, 19 ձայնից նա ստացել է 9 սև քվէ։ Ուրեմն թեմի ազգաբնակութեան համարեա կէսն էլ հակառակ է Օրմանեանին»։ Շատ բարի։ Եթէ Բեսարաբիայի թեմի տրամադրութիւնը չափելու համար «Հօրիզոնը» վերցրել է ընտրված պատգամավորի սպիտակ ու սև քվէների յարաբերութիւնը (10 ընդդէմ 9-ի), պէտք է ասենք, որ նա նոյնպէս վարվէր և Թիֆլիսի թեմի նկատմամբ, և գտնելով որ այս թեմում օրմանեական պատգամաւորն ստացել է 74 սպիտակ ընդդէմ 21 սևի՝ պէտք է եզրակացնէր, որ Թիֆլիսի թեմի ստվար մեծամասնութիւնը ցանկանում է Օրմանեանին։ Բայց տեսանք, որ «Հօրիզոնը» այստեղ համեմատել է ոչ թէ սպիտակ ու սև քվէները, այլ Թիֆլիսի և գաւառի ազգաբնակութեան թիվը, թէև զարձեալ անձիրդ հաշիվներով։ Ուրեմն գործ է ածել տարբեր չափեր։

Դարձեալ «Հօրիզոնը» ընդգծում է Երևանի թեմի կաթողիկոսական թեմի, և ոչ-օրմանեական պատգամավորի ընտրութիւնից եզրակացնում է, թէ «կաթողիկոսական թեմը չէ ուզում Օրմանեանին իր առաջնորդն ունենալ»։ Ընդունենք և այս։ Բայց այդ դէպքում էլ «Հօրիզոնը» հետևողաբար վարվելով՝ պէտք է մատնանիշ անէր և ուրիշ թեմերի կաթողիկոսութիւնը։ օրինակ՝ Թիֆլիսի թեմը, որ ռուսահայոց մտավոր կենտրոնն է, ուզում է Օրմանեանին։ Նախիջևանի թեմը, որ պարունակում է իր մէջ Մոսկվայի, Պետերբուրգի և Նոր-Նախիջևանի ինտելիգենտ և շատ ազդեցիկ հայութիւնը, ուզում է Օրմանեանին։

Ասածներից եզրակացնում ենք, որ 1) «Հօրիզոնի» բերած թվերը ճիշդ չեն և իրականութեան չեն համապատասխանում և 2) նրա հաշիվները և գնահատումները առնչաւոր չեն, այլ տենդենցիոզ։

Սրանից յետոյ դառնանք պարզելու ռուսահայոց տրամադրութիւնը՝ թեմերի հայ ազգաբնակութեան վիճակագրական թվերով—որքան որ սա կարող է յայտարար լինել տրամադրութեան։ Այս անում ենք, որովհետև «Հօրիզոնը» փորձեց այդպիսի թվերի վրա հիմնվելով եզրակացութիւններ հանել։ Մեր բերելիք թվերը Անդրկովկասի համար հանված են կովկասեան վիճակագրական կոմիտեի ժողովածուից[1]), որ հիմնված է 1897 թ. մարդահամարի տվեալների վրա, իսկ Կովկասից դուրս՝ Մխիթար վարդապետի (այժմ եպիսկոպոս) «Հայերը Ռուսաստանում» աշխատութիւնից, որի թվերը նոյնպէս հիմնված են նոյն 1897 թ-ի մարդահամարի վրա, թէև որոշ մասնագիտական աշխատանքներից օգտվելով հեղինակը ուղղումներ է մտցնում մարդահամարի թվերի մէջ, ընդհանրապէս ավելացնելով հայ ազգաբնակութեան թիվը։ Արդ՝ սրբազան Օրմանեանին ձայն տվող թեմերն են։

1) Նախիջևանի և Բեսարաբիայի թեմը, որ բաղկացած է հետևեալ մասերից.

Դոնեան վինվ. շրջան.	27,118	հայ ազգ.
Տավրիկեան նահանգ	7,494	» »
Խերսոնի նահանգ	2,212	» »
Մոսկվա, Պետերբուրգ և այլն մօտ	3,000	» »
Գումար	39,824	հայ ազգ.

2) Շամախու թեմը, որը կազմում է Բաքվի նահանգը | 50,500 | հայ ազգ.

3) Ղարաբաղի թեմը, որը կազմում է Գանձակի նահանգը, բացի Գանձակի, Ղազախի և Զանգեզուրի գաւառներից, ուրեմն Գանձակի նահանգի 293,632-ից հանելով երեք գավառների հայ ազգաբնակութեան թիվը 150,409՝ կը ստանանք 143,223։

4) Վրաստանի և Իմէրէթի թեմը, որը կազմում են

Թիֆլիսի նահանգ	221,033	հայ ազգ.
Քութայիսի նահանգ	21,107	» »
Գանձակի գավառ	43,113	» »
Ղազախի »	43,050	» »
Գումարն է	329,303	հայ ազգ.

5) Ալէքսանդրոպոլի վիճակը 136,652։

Ուրեմն սրբազան Օրմանեանի կաթողիկոսական թեկնածութիւնը ռուսահայոց մէջ վաստակել է 699,502 ձայն։

Սրբազան Դուրեանին ձայն է տվել Աստրախանի թեմը, որը կազմում են

Աստրախանի նահանգ	4,303	հ. ազգ.
Մէջին Ասիա	4,838	» »
Դաղստան	1,623	» »
Կուբանի շրջան	14,650	» »
Ստավրոպոլի նահանգ	5,355	» »
Թերեքի շրջան	14,472	» »
Զեկնոմորեան շրջան	6,141	» »
Գումար	51,382	ձայն։

Սրբազան Խորէն Մուրադբէգեանին ձայն է տվել Երևանի թեմը, որը կազմում են Երևանի նահանգը, դուրս գալով Ալէքսանդրոպոլի վիճակը,

433,682—136,652=297,030 հ. ազգ.

Կարսի շրջան	72,697	հ. ազգ.
Զանգեզուրի գավառ	63,246	» »
Գումար	432,973	ձայն

Ուրեմն իւրաքանչիւր թեմի հայ ազգաբնակութեան ձայներն ի նկատ առնելով—եթէ կամենանք այս թվերով դատել, ինչպէս վարվել է «Հօրիզոնը»—կը տեսնենք, որ ամբողջ Ռուսաստանի հայ լուսավորչական ազգաբնակութեան մօտ 1 միլիոն 184 հազար ձայնից սրբազան Օրմանեանն ստացել է բացարձակ մեծամասնութիւն, մօտ 700 հազար ձայն. մնացած մօտ 484 հազար ձայնը բաժանվել են սրբազան Մուրադբէգեանի (մօտ 433 հազար) և սրբազան Դուրեանի մէջ (51 հազար)։

Կարելոր է այստեղ մի ուղղում մտցնել։ Մենք վերցրինք հայ-լուսավորչական ազգաբնակութիւնը ըստ 1897-ի մարդահամարի, որ վերջին պաշտօնական ընդհանուր մարդահամարն է։ Սակայն ազգաբնակութիւնը տարէ-ցտարի աճելով՝ հայ ազգաբնակութեան թիվը ներկայումս ավելի է, քան վերը բերված թվերը։ Ընդունելով հայ ազգաբնակութեան միջին աճումը (ըստ նոյն մարդահամարի տվեալների) մի հազարի վրա տարեկան մօտ 11 մարդ՝ կը տեսնենք, որ 14 տարվայ ընթացքում Ռուսաստանում հայ ազգաբնակութիւնը աճել է մօտավորապէս 277,000 մարդով, և ուրեմն ներկայումս էլ մօտ մի միլիոն 457,000 մարդ։ Բայց թվերի այս փոփոխութիւնը չէ ազդում վերը բերված եզրակացութեան վրա, որովհետև ազգաբնակութիւնը ամեն օր աճում է, ուստի թվերի մէջ յարաբերութիւնը գրեթէ նոյնը կը մնայ։

Թէ այս թվերը, թէ այն իրողութիւնը, որ ռուսահայոց 6 թեմից 4-ը ձայն են տվել սրբ. Օրմանեանին, իսկ միւս 2 թեմի ձայները բաժանվել են երկու ուրիշ թեկնածուների վրա, և թէ այն հանգամանքը, որ Թիֆլիսի թեմը, ռուսահայոց մտավոր կենտրոնը, որտեղ խմբված են մեծ քանակութեամբ ինտելիգենտ այժեր, հրատարակվում են ամենից ազդեցիկ ու տարածված թերթերը, այդ թեմը ձայների ստվար մեծամասնութեամբ (74 ընդդէմ 21-ի) ձայն տվեց օրմանեական պատգամավորների—բերում են այս եզրակացութեան, թէ արդարև ռուսահայ ժողովրդի ստվար մեծամասնութեան ընտրելին է սրբ. Օրմանեանը։

Ստ. Մալխասեանց

[1]) «Сборникъ Статистическихъ свѣдѣній по Закавказскому краю», Тифлисъ, 1902 г.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Այսուհետև այս վերնագրի ներքոյ տպելու ենք կաթողիկոսական ընտրութեան վերաբերեալ բոլոր լուրերը և տեղեկութիւնները։

Մանչեսթրից մեզ գրում են հետևեալը.

«Եւրոպայի հայ գաղթականութեան կողմից կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար պատգամաւոր ընտրվեց Պետրոս Տօնապետեան (նախկին Թղթակից «Արձագանքի»՝ Վաղինակ)։

«Եւրոպահայոց պատուիրակների ժողովի բանաձևը հետևեալն է.

«Եւրոպայի հայոց ներկայացուցչական ժողովը իր պատուիրակի խղճին և դատողութեան թողնելով հանդերձ իր քուէարկութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ արժանաւոր հայրապետի ընտրութեան համար, կը յանձնարարէ իրեն տալու իր քուէն այնպիսի ընտրելիի մը որ նախանձախնդիր լինի Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութեան և աւանդութեանց անպայման, և որուն ընտրութիւնը ազգին մէջ պառակտման ծնունդ տալիք ոեէ հանգամանք չունենայ»։

—

Երէկ Թիֆլիս հասաւ Ամերիկայից հայ ժողովրդի կաթողիկոսական պատգամաւոր Մաղաք Պէրզէրեանը, որ Նիւ-Եորկից եկել է այստեղ 16 օրվայ ընթացքում, անընդհատ ճանապարհորդելով։

Սակայն մի հանգամանք առաջ է բերել պառակտում Ամերիկայի հայ գաղութի մէջ, որի մի այլ մասն ընտրել է մի այլ պատգամաւոր Համբարձում Ամբրուկիանին, որ նոյնպէս ճանապարհ է ընկել և այս օրերս կը հասնի Թիֆլիս։ Մանրամասնութիւնները կը հաղորդենք յաջորդ անգամ։

Էջմիածնից մեզ գրում են նոյեմբ. 29-ին.

Ցայսմէ էր, որ Լիմ և Կոտուց անապատի միաբանութիւնը, կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար, իր ներկայացուցիչ էր ընտրել Սուքիաս արքեպ. Պարզեանցին, իսկ աշխարհական պատգամաւոր Հ. Առաքելեանին։ Ցիշեալ վանքերի վանահայրերը՝ Եղիա և Գաբրիէլ վարդապետները և թեմական ներկայացուցիչները իրանց այդ որոշումը պաշտօնապէս հաղորդել էին Սուքիաս արքեպիսկոպոսին այս տարվայ հոկտ. 4-ին № 18 նամակով։ Նոյն այդ որոշման մասին նրանք տեղեկագրել են, ինչպէս ասում են իրանց յիշեալ նամակում, Կ. Պոլսի ազգ. պատրիարքարանին, և Էջմիածնի սինոդին։ Իսկ ազգ. պատրիարքարանն էլ յայտնել է սինոդին Հ. Առաքելեանի և Սուքիաս արքեպիսկոպոսի ընտրութեան մասին նոյեմբերի 7-իր № 34 գրութեամբ։ Սուքիաս արքեպիսկոպոսին ընտրողները, ի միջի այլոց, գրում են.

«Այս առթիւ աւելորդ չենք սեպեր մեր կողմանէ իրրև արժանաւոր ընտրելի կաթողիկոսութեան՝ ներկայացնելու Կարապետ արքեպ. Եպ. Տէր-Մկրտչեան՝ առաջնորդ Թէվրէզու և տեր-Մաղաքիա արքեպ. Օրմանեան»։

Նոյն վանքերից նոյն մարդկանց ստորագրութեամբ եբէկ թուղթ ստացվեց սինոդում, որով յայտնում են, որ իրանք իրանց ներկայացուցիչ են ընտրել Թիֆլիսի կօնսիստորիայի անդամ Ղեոնդ քահ. Ալիխանեանին։ Այս քահանան Սուրբ Էնանցի երկրպագուներից է ի մանկութենէ։ Մի ուրիշ նմուշ, որ անպայման կերպով հաստատում է, որ յայտնի ցուցակով յանձնարարված մարդիկ ճնշման տակ են ընտրվում։ Այդ առթիւ Ագրիանուպոլսի հայոց առաջնորդն իր՝ այս տարվայ հոկտ. 26-ի № 1216 գրութեան մէջ յանուն Սիօն վարչ-ի (ցուցակով յանձնարարված) գրում է. «Իրրև հոգեւոր դասու ներկայացուցիչ՝ ի օ. էջմիածին ներկայ գտնուելու իրաւունք՝ և այս սուրբ ու նուիրական պարտականութիւն անձամբ կատարելու ջերմ փափագով էինք, սակայն ինչ-ինչ եւ քանաւոր պատճառներու բերմամբ Կ. Պոլսոյ հոգեւորական վերին իշխանութեան յանձնարարութեամբ թէ մեր և թէ գաւառական ընդհանուր ժողովոյ կողմից կը յանձնենք այդ վսեմ և նախանձելի պաշտօնը ձեզ»։

—

Էջմիածնից մեզ գրում են նոյեմբ. 27-ին.

Երկու օր առաջ տեղս ժամանեցին երկու վարդապետ՝ Ամասիայի առաջնորդ Գէորգ վարդ. Իբրանոսեան և Տրապիզոնինը՝ Սեբաստիայ վարդ. Սամուէլեան։ Սրանք Թիֆլիս չեն մտել։ Բաթումում Մելեան քահանան նրանց խորհուրդ է տուել, որ առանց Թիֆլիս մտնելու՝ ուղղակի էջմիածին գան։

Սինոդում արդէն հետևեալ ստացվում են պաշտօնական տեղեկութիւններ՝ ընտրված պատգամաւորների մասին։ Այսպէս՝ Վահրամ եպիսկոպոս Մանկունին նոյեմբերի 7-ի № 34 գրութեամբ յայտնում է սինոդին.

«Առ այժմ ի պարբերաբանս հասած տեղեկագրերու համաձայն ընտրուած են ի Ռուսաստան բնակուող ազգայիններէն, ըստ յետագայ ցուցակի.

«1) Երուսաղէմ.—Բագրատ վ. (էջմիածնի միաբան), Սամսոն Յարութիւնեան (Թիֆլիս, փաստաբան)։

«2) Աղրիանուպոլսէն.—Սիօն վ. (էջմիածնի միաբան)։

«3) Վանէն.—Յովհ. Քաջազունի (Բազու, ճարտարապետ)։

«4) Լիմ և Կոտուց.—Սուքիաս արքեպիսկոպոս (էջմիածնի միաբան), Համբ. Առաքելեան (Թիֆլիսից, խմբագիր)։

«5) Բրուսայէն.—Եուսիկ վարդապետ (էջմիածնի սինոդի անդամ), Յովհ. Յովհաննիսեան (տաճնաղպիր սինոդի)։

«6) Բղէշէն.—Յակոբ Շաւարշ (Սամարգանդ, վաճառական)։

«7) Խարբերդէն.—Աբրահամ Դաստակեան (Բազու, նախագահ նաւթ. միութեան)։

«8) Արաբկիրէն.—Մարտիրոս Քէչդիկեան (Նովոռոսիյսկ, վաճառական)։

«9) Քեմախէն.—Արշ. քահանայ Մինասեան (Թիֆլիսի քահանայ), Յովհ. Տէր-Միքայէլեան (Երևան, բժիշկ)։

«10) Կեսարիայէն.—Մկրտիչ էֆ. Հաճիպալեան (Թիֆլիս, վաճառական), Ռուբէն աբեղայ Մանասեան (էջմ. միաբան)։

«11) Տիգրանակերտէն.—Գարեգին վարդապետ (էջմ. միաբան), Ալ. Քալանթար (Թիֆլիս, խմբագիր)։

«12) Բաղդադէն.—Տիրայր վարդ. (էջմ. միաբան), Տիգրան էֆ. Գոյումճեան (Թիֆլիս, վաճառական)։

«13) Եգիպտոսէն.—Մեսրոպը ա. քահ. Մելեան (Բաթում)»։

Բացի այս՝ ստացվել է մի հեռագիր մի քահանայից, որով յայտնում է, թէ Թամզարայի թեմից ներկայացուցիչ են Հմայեակ վ. Արշարունի և Վրթանէս Փափազեան, իսկ Շաբին-Գարահիսարից Երուանդ քահ. Նալբանդեան և բժ. Սուչեան։ Եւրոպայի առաջնորդ Գէորգ եպ. Իւթիւճեանը իր ներկայացուցիչ է նշանակել Հմայեակ վ. Արշարունուն, իսկ Բուժնիայի և Մոլդաւ-Վալախիայի թեմից հոգեւոր ներկայացուցիչ է նշանակված Ներսէս վ. Մելիք-Թանգեան։

Սինոդը օրագրով նշանակեց միաբանութեան կողմից 7 ներկայացուցիչներ ըստ ձեռնադրութեան աւագութեան՝ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանին, Շիրակունի արքեպիսկոպոսին, Բարդուղիմէոս, Ղեոնդ և Աշոտ եպիսկոպոսներին և Համազասպ և Գրիգորիս վարդապետներին։

ՊՐՕՎՈԿԱՑԻԱՆ ԵՒ ՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

II

«Հօրիզոնը» և նրա տիրապետող ասպետները առանց քաշվելու դիմում են մի սովորական մանեւվրի. նրանք հնարում են մի ստութիւն, զրպարտութիւն, տալիս այդ ստութիւնը, զրպարտութիւնը իրրև իրողութիւն և ապա յենվում նրանց վրա իրրև ապացոյցների։

Նոյնպէս վարվեցին և ներկայ դէպքում։ Նրանք սկսեցին թմբկահարել, թէ իբր պատուիրակների ժողովից ընտրված մասնաժողովը որոշած է եղել «փառաւոր» և «մեծ» ընդունելութիւն ցոյց տալ Թիւրքիայից եկող պատգամաւորներին, սարքել շքեղ հացկերոյթներ, տալ նրանց բնակարաններ, դիմաւորել, և այլն, և այլն, և այդ ամենը իբր նրանց կաշառելու նպատակով։ Եւ այդ ստութիւնները, զրպարտութիւնները հօրիզոնականները տպեցին ոչ միայն իրանց թերթում, այլ և աշխատեցին իրանց սինլքոր գործակալների ձեռքով թելադրել Բաթումում և եկող պատգամաւորներին և յորդորել նրանց Թիֆլիս չը մտնել, այլ ուղղակի էջմիածին գնալ։

Ինչպէս յայտնի է, դեռ Թիւրքահայ պատգամաւորների գալուց առաջ, «Հօրիզոնը» հրապարակ նետեց մի պրովոկացիա, թէ իբր Թիֆլիսի եկեղեցիների պատուիրակները մտադիր են պատգամաւոր ընտրել մի կապիտալիստ կամ վաճառական, որպէսզի սա կարողանայ կաշառել Թիւրքահայ պատգամաւորներին։ Սրանով նա աշխատում էր գրգռել և զինաւորել Թիւրքահայ պատգամաւորներին Թիֆլիսի վաճառական դասակարգի դէմ, ցոյց տալով նրանց իբրև մարդիկ, որոնք ընդունակ են կաշառելու։ բայց նա չէր տեսնում մեղալի միւս կողմն ևս, այն է, թէ այդպիսի միտք արձարձելով նա ստորացնում և վիրաւորում է նաև Թիւրքահայ պատգամաւորներին, ցոյց տալով նրանց իբրև այնպիսի մարդիկ, որոնք ընդունակ են կաշառվելու։

Արդեօք հարկ կայ կրկնելու, որ Թիֆլիսի պատուիրակները, նոյնիսկ վաճառականները, բնաւ միտք չեն ունեցել ընտրելու պատգամաւոր մի վաճառականի. հարկ կայ կրկնելու, որ Թիֆլիսի վաճառականների մարքից բնաւ չէր կարող անցնել այդպիսի մի միտք—կաշառել Թիւրքահայ պատգամաւորներին։

Բայց անգամները, ստախօսները և պրովոկատորները ոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում։

Եւ նրանք կանգ չառին։ «Հօրիզոնը» այժմ էլ սկսել է մի գլուխ ստութիւններ տպել, թէ իբր Թիֆլիսի մասնաժողովը առաջարկել է հացկերոյթ Թիւրքահայերին, և սրանք մերժել են ընդունել, թէ իբր պատրաստված են եղել նրանց համար շքեղ բնակարաններ, բայց նրանք մերժել են։ Վերջապէս, վերջին ստութիւնը և պրովոկացիան տպագրված է երէկվայ համարում (№ 268), թէ իբր Թիւրքահայ պատգամաւորները կոչվել են «հոսհոսներ» և «կաշառված»։

Զը վիտենք ով է անուանել Թիւրքահայ պատգամաւորներին «հոսհոս» և «կաշառված», բայց եթէ այդ վերաբերում է «Մշակին», բացարձակապէս և անխիղճ քսութիւն է, չար պրովոկացիա, որովհետև «Մշակի» մէջ ոչ մի այդպիսի խօսք, ածական չէ ուղղվել Թիւրքահայ պատգամաւորների հասցէին։

Գալով միւս ստութիւններին և քսութիւններին, դրականապէս յայտնում ենք, որ Թիֆլիսի մասնաժողովը, ընտրված թեմի պատուիրակների ընդհանուր ժողովից, ոչ մի որոշումն չէ ունեցել հացկերոյթ կամ ճաշ տալ Թիւրքահայ պատգամաւորներին, կամ ձրի բնակարաններ յատկացնել նրանց, կամ դիմաւորել զանազան անձանց միջոցով նրանց, հետևաբար և ոչ ոք չէ մերժել ու ոեւիթ չէ ունեցել մերժել մի հիւրասիրութիւն, մի հացկերոյթ, որ նրանց չէ առաջարկվել։

Յաջորդ անգամ փաստերով ցոյց կը տանք իսկական իրողութիւնը, որ այնքան անխղճօրէն յեղաշրջված է «Հօրիզոնի» կողմից։

Ինդհակառակը, «Հօրիզոնն» է, որ նոյն համարում աշխատել է մի տեսակ տէրրօրի ենթարկել ոմն Արշակ Զամպեանի բերանով, գրելով թէ Թիւրքահայ պատգամաւորները յայտարարել են թէ՝ «կարող էք հաւատացած լինել, որ ոչ մի Թիւրքահայ չի համարձակվի Օրմանեանին սպիտակ քուէ տալ և... վերադառնալ իր ընտրողների մօտ»։

Հասկանալի է, թէ ինչ են նշանակում այս թունալից խօսքերը։ Հ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ «Մշակի» ներկայ համարը բաղկացած է 1½ թերթից։ Ցաւելուածական կէս թերթը պարունակում է յօդուածներ՝ նուիրված «Մշակի» քառասնամեակի նախօրեակին։

✦ Թիֆլիսի վաճառականների աւագ Արշակ Ն. Միլեանը խնդրում է մեզ յայտնել, որ ստանալով զանազան տեղերից հասմակրական նամակներ «Մշակի» № 257-ի մէջ տպած իր նամակի առիթով, նա անկարող է լինում պատասխանել այդ նամակներին հասցէ չը լինելու պատճառով, ուստի խնդրում է նամակները ուղարկողներին հաղորդել և իրանց հասցէները, իսկ առայժմ շնորհակալութիւն է յայտնում ամենքին։

✦ Բժշկ. Յովհաննէս Գասպարեանը, ինչպէս միշտ, այժմ ևս 1912 թ. համար ուղարկել է մեզ 100 ռուբլի՝ տաս օրինակ «Մշակ» ձրիաբար ուղարկելու զանազան հաստատութիւնների, որոնք միջոց չունեն տանալու թերթը։

✦ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեան, ներկայ լինելով հանդուցեալ պատմաբան գեն. Պատօյի թաղմանը, ցաւակցութիւն յայտնեց հանդուցեալի որդուն՝ գնդապետ Պատօյին և փեսայ գ. լ. գ. Բէրխմանին։ Վաղը քաղ. վարչութիւնը հանդուցեալի մասին մասին կը զեկուցէ դումային։

✦ Այսօր Թիֆլիսի մէջ տեղի կունենան ձայնաւորների ընտրութիւններ 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ ընտրական քաղաքամասերում։ Ընտրութիւնները կը սկսվեն առ. ժամը 10-ից և կը վերջանան երեկոյեան ժամը 6-ին։ «Նոր խմբակը» 5-րդ ընտրողական քաղաքամասում առաջարկում է ընտրողներին իրրև իրաւասուների ընտրել հետևեալ անձերին. 1) Սրբազան Նիկ. Ոսկ., գում. ձայն., տիմ. հաշ. կուրս., 2) Ալէքսէեվ-Մեսխիեվ Շալվա Վլադ., երդ. հաւատ. օգն., 3) Բէքուրիշվիլի Անդր. Գեորգ., երդ. հաւ. օգն., 4) Բէյլերէր Պետր. Ապոլ բժիշկ, 5) Բելօուսով Սէրգէյ Վասիլ. ծառայող, 6) Բելեաեվ Մատվ. Միխ. տանտէր, 7) Վէյնբէրգ Ֆրանց Էմման. Անդր. երկ. փայտի պահ. կառ., 8) Գէտաշվիլի Վաս. Գրիգ. մաքնապետ, 9) Դէմեդով Վաս. Ալէքս (գում. ձայն.) երդ. հաւ., 10) Զափարիձէ Կոնստ. Իսս. (գում. ձայն.) երդ. հաւ., 11) Եէլիեվ Մնաց. Ղաբամ. բժիշկ, 12) Կաֆիեվ Գարբ. Գերկառավ. Բասսիյս. տրանս. և տարաբ. ընկ., 13) Կապրանով Իվ. Խարլամ. տանտէր., 14) Լէման Գուստ. Գուստ. խմիչների երկ. վարչ., 15) Լօլաձէ Դմ. Իվ. վաճառական, 16) Մակեդոնսկի Իսս. Դմ. առևտրական, 17) Ճէպլիձէ Վաս. Անդր. ատա. ճան. հաղ. շրջ., 18) Պաւլով Պաւ. Վաս. առևտրական, 19) Պաղաւա իշխ. Գէորգ Մելիք. երդ. հաւ. օգն., 20) Պոպով Վիս. Աւետ. բժիշկ, 21) Ստեպանով Իսս. Նիկ. երդ. հաւ., 22) Տէր-Լեոնդեանց Տիգր. Գր. երդ. հաւ. օգն., 23) Խուդաձէ Սիս. Թոմ. գիւղատնտես, 24) Փէֆէլով Վաս. Տիտ. տանտէր։

✦ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ պարտադիր կանոնները խախտելու համար 25-ական ռուբլի տուգանքի են ենթարկվում շոֆէրներ Գէորգի Կերվաշիձէն և Դաւիթ Վարդիձէն։

✦ Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեամբ երեք օրով ոստիկանատան մէջ բանտ արկվում է 8-րդ քաղաքամասի պրիստաւի օգնական Մորոզովը դէպի իր ծառայութիւնը անփոյթ վերաբերվելուն համար։

✦ Այսօր Աւճարեան ժողովրդական առողջապահարանում, վրաց դերասանուհի Գաբունիա-Ցագարելլիի մասնակցութեամբ տարեվերջի առիթով, վրացերէն կը ներկայացվի «Մանուսի» կոմէդիան։

✦ Դեկտ. 2-ին կախաղան բարձրացրին կովկասեան զինուորական դատարանից մահվան դատապարտված Համզատ Կուբ-Մահմատօղլին։

✦ «Բ. Մ.»-ում կարդում ենք. «Սուլթանի նախկին եղիսկոպոս Դիմիտրին իր թեմի կողմից դիմից սինոդին խնդրելով թոյլ տալ առաջվայ նման քահանաներ նշանակել եղիսկոպոսական իշխանութեամբ։ Անհարիր գտնելով վերացնել որոշումը միայն մի թեմի միջնորդութեան համաձայն, սինոդը առաջարկեց Վրաստանի էկզարխ Իսնօվէնտի արքեպիսկոպոսին հարցնել մնացած թեմերին, որոնք մտնում են էկզարխութեան մէջ։ Եկզարխ Իսնօվէնտին զեկուցագիր ներկայացրեց, որի մէջ վրաց հոգեւորականութեան մեծամասնութիւնը միանում է Սուլթանի առաջնորդի միջնորդութեանը, ինչպէս նաև ծխականների ահագին մեծամասնութիւնը։ Զեկուցագիրը քննվեց սինոդի վերջին նիստում, որը և հնարաւոր դատեց բաւարարութիւն տալ միջնորդութեան»։

✦ Թիֆլիսի որբ և չքաւոր հայ երեխաներին օգնող «Լոյս» ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ տպել, որ յօգուտ իր ձրի դպրոցի ստացել է իշխանուհի Մարիամ Թումանեանից 25 ռուբլի, որի համար յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։

✦ Նուխու քաղաքային պօսա-հեռագրական գրասենեակում ընդունվում են միջազգային հեռագիրներ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Երգչուհի իշխանուհի Թարխանովա

Մենք լսեցինք երգչուհուն «Տրավիատա» օպերայում, Վիոլետայի խոշոր դերում։

Թարխանովան ունի հաճելի ձայն, երգում է ճաշակով և զգացմունքով, մանում է իր դերի տրամադրութեան մէջ, ունի վայելուչ արտաքին։

Երգչուհու ձայնը խոշոր, մեծ էֆֆեկտներ կատարող, աղմկայոյզ ձայներից չէ, բայց նա զգաւիչ է, մաքուր, ախորժալուր, քնքոյշ, փափաքիչ։

Խաղը բաւական աղատ է, զգացված մանաւանդ վերջին գործողութեան մէջ. բայց երգչուհին պահում է իրան փոքր ինչ կոբացած, և նրա շարժումները դեռ կարօտ են աւելի մշակութեան։

Թարխանովան երգում էր իտալերէն։ Նա սովորել է Իտալիայում ամբողջ երեք տարի և իր առաջին աջող փորձերը արել է Իտալիայում։

Թատրոնը ծայրից ծայր լիքն էր։ Երգչուհուն ընդունեցին ջերմագին ծափահարութիւններով և մատուցին բազմաթիւ փունջեր։

Ուրախալի էր տեսնել գեղարուեստի ասպարէզում դարձեալ մի կովկասուհու, օժտված երգելու շնորհքով, մշակված ախորժելի ձայնով։ Սիրող

II

Արտիստական թատրոնում

Մ. Պոլտավցեվի օպերէտային խումբը շարունակում է գրաւել օպերէտայի սիրահար հասարակութեան։ Երկու տարի առաջ Թիֆլիսում տալիս էր օպերէտային ներկայացումներ Վալէնտէյի խումբը, որ թէև ունէր լաւ օրկէստր, սակայն բէպերտուարի կողմից աղքատ էր։ Այս տարի ընդհակառակն է։ Պոլտավցեվի խմբի օրկէստրը միայն իսկական օրկէստրի տաւերն է. խումբը նոյնպէս աղքատ է ձայներով, բայց ընդհանուր առմամբ խաղում է սահուն և միահամուռ աշխատանքով։ Համեմատաբար աչքի են ընկնում փորձված պարուհի ու օպերէտային երգչուհի Լէնսկայա, Զուգաեվ, Բարատով։ Իսկ իբրև կոմիկ՝ Ռաֆալսկի շատ օրինակելի է ուսաջող։

Պոլտավցեվը սակայն համարեա ամեն օր դնում է նորութիւններ։ Դեկտեմբերի 2-ին խումբը խաղաց Վալէնտինովի 3 գործ. «Մամզել Պարագվայ» վերին աստիճանի ծիծաղաշարժ օպերէտան, որ զուրկ չէ նմանապէս որոշ չափով սատիրայից ամուսնական խնդրի նկատմամբ։

Ներկայացումը մեծ բաւականութիւն պատճառեց թատրոնակներին։ Միևնոյն օպերէտան կը կրկնվի այսօր։ Ե.

III

Ժողովրդական Տան թատրոնում

Ժամանակի ոգու համաձայն գեղարուեստը դադարում է միայն արտօնեալ դասակարգերի սեփականութիւն լինելուց և ձգտում է յարմարվել նաև հասարակութեան ոչ առանձնաշնորհեալ տարրերի պահանջներին։

Հայ դերասանական խումբը երբեմն առերբեմն դուրս է գալիս Արտիստական թատրոնի սահմանափակ պարիսպներից և իջնում է ժողովրդի լայն խաւերի գիրկը։ Այդ այդպէս էլ պիտի լինէր, որովհետև այլապէս լինել չէր կարող։

Մեր ասածների ապացոյցը տեսանք մենք ուրբաթ, դեկտեմբերի 2-ին, Զուբալովական Ժողովրդական Տանը, ուր հայ դրամատիկ դերասանական խումբը խաղաց Գէլի «Տրիլբի» 5 գործ. դրամա։

Եւ պիտի կանխաւ ասենք, որ մենք յոյժ գոհ տպաւորութիւն ստացանք այդ ներկայացումից, իսկ հասարակութիւնը խանդաւառ ընդունելութիւն ցոյց տուեց դերակատարներին։

Մենք չենք խօսի պիէսի մասին, որովհետև նրա սիւժէն հաւանօրէն ծանօթ է մեր ընթերցողներին։ Ներկայացումը աւելի քան աջող անցաւ, եթէ չը յիշենք մի քանի աննշան անհարթութիւնները։ Մայսուրեան՝ Տրիլբիի, Աբելեան՝ Սվէնգալիի, Սեւումեան՝ Տաֆիի, Շահխաթունի՝ Բիլլի Բէգօտի, Մանուէլեան՝ Ժէկկոյի և Աւետեան՝ Թոմմա Բէգօտի դերերում շատ լաւ էին։ Միւս դերակատարները նը-պաստեցին անսամբլի պահպանման։

Ժողովրդի համար արդէն անհրաժեշտ պահանջ է դարձել հայերէն ներկայացումներին յաճախել։ Նկատելի է նաև, որ նրա դեղագիտական ճաշակը արդէն որոշ չափով մշակվել, կոկվել է։ Հետևաբար և յոյժ ցանկալի է, որ հայ դերասանական խումբը հնար եղածին չափ յաճախ կազմակերպէր ժողովրդական ներկայացումներ։ Ժողովուրդը գիտէ իր ընդունակ դերասաններին ըստ արժանւոյն վարձատրել, հետևաբար և հայ դերասանների համար ցանկալի պիտի լինի նրա գրկումը գտնվել, նրան ծառայել, նրա մտաւոր զարգացմանը նպաստել։ Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, 29 Նոյեմբերի

«Սուրհանդակի» № 436-ում տպված է բժշկ. Ա. Բաբայեանի յօդուածը «Բժշկական քննութիւն սրբազան Օրմանեանի» վերնագրով։

Այդ յօդուածի մէջ պ. բժշկապետը, խօսելով երջանկայիշատակ Իզմիրլեան կաթողիկոսի հիւանդութեան մասին, պատմում է, որ դեռ ևս 2 տարի առաջ Կ. Պոլսում հանգուցեալի Ռուսաստան գալուն մի երկու շաբաթ մնացած՝ այցելելով Իզմիրլեանին գտել էր նրան «բոլորովին առողջ, ժիր և քաջարի»։ Երկու տարուց, 1910 թ. սեպտեմբեր ամսին, կրկին անգամ այցելելով կաթողիկոսին էջմիածնում և մանրամասն բժշկական քննութիւն կատարելով նրա սրտի և երակների վրա, յարգելի բժշկապետը ուղղակի ապշած է մնում, թէ ինչպէս նորին օծութիւնը սրտի և երակների այդպիսի քայքայված դրութիւնով վստահացել է յանձն առնել կաթողիկոսական ծանր լուծը։ Այդ հարցը բժկպ. Բաբայեանը բացատրում է նրանով՝ որ իբր թէ Իզմիրլեանը, թէև բարեխիղճ հոգևորական, այսու ամենայնիւ փառասիրութիւնից գրգռված գայթակղվել է կաթողիկոսական բարձր տիտղոսից և, չը նայելով իր խանդավառած առողջութեան, համաձայնել է բարձրանալ Հայրապետական Գահի վրա։

Կարդալով բժշկպ. Բաբայեանի յօդուածը՝ այն տեսակ տպաւորութիւն է ստացվում, որ յօդուածագիրը ձգտում է նսեմացնել նախորդ հայրապետի արժանիքը՝ աւելի ցայտուն դարձնելու համար իր կաթողիկոսական թեկնածուի՝ սրբազան Օրմանեանի առաւելութիւնը. բայց ի հարկէ այդպիսի տգեղ ատրճանակներով չէ որ թեկնածուն պէտք է բարձրանայ։ Կաթողիկոսական Գահի վրա։ Սրբազան Օրմանեանը օժտված է այնքան արժանիքներով և բարեմասնութիւններով, որ նրան փայլեցնելու համար կարիք չը կայ ուրիշների վրա ստուեր ձգելու։

Այս տողերիս գրողը նոյնպէս տրիտ է ունեցել քննել հանգուցեալ հայրապետի առողջութիւնը։

Կաթողիկոսական օծման ժամանակ ներկայ լինելով էջմիածնում, մի քանի բազուարնակ բժիշկներ, աչքի առաջ ունենալով էջմիածնի կլիման և կաթողիկոսին սպասող ծանր ու բարդ գործունէութիւնը, առաջարկեցինք մեր պատրաստականութիւնը բժշկական խորհուրդ կազմելու և անհրաժեշտ առողջապահական կանոնները մշակելու վեհափառի համար. այդ խորհրդին վանքի մշտական բժիշկ Գար. Տէր-Խաչատրեանի հետ մասնակցում էին բժշկապետ Ե. Վարդապետեան, Գաբրիել Տէր-Ներսէսեան և հս. հարկաւոր քիմիական և միկրոսկոպային քննութիւնները կատարում էր բժիշկ Վ. Տէր-Գրիգորեան։ Մեր՝ մի ժամից աւելի տևող մանրամասն քննութիւնը ցոյց տուեց, որ վեհափառ հայրապետը վայելում է կատարեալ առողջութիւն. սիրտը, երակները և միւս գործարանները չէին ներկայացնում ոչ մի զարտուղութիւն, որը անհամապատասխան լինէր նրա պատկառելի հասակին։ Ծանօթ լինելով վեհափառի անցեալ կեանքի և այն տառապանքների հետ, որոնցով լի է եղել այդ կեանքը, մենք իսկապէս զարմացած էինք, որ նա դեռ ևս այդքան ամուր և քաջառողջ կազմուածք ունի։

Այդ քննութիւնից մօտ տարի ու կէս անցած՝ երբ հեռագիրը գուժեց նորին օծութեան հիւանդութիւնը և մահը, մեզ՝ նրան քննող բժիշկներիս համար միանգամայն անկասկածելի էր, որ կաթողիկոսի առողջութիւնը քայքայվել է միայն իր կեանքի վերջին ամիսներում շնորհիւ մեզ անյայտ հանգամանքների։ Մեր քննութիւնը տրիտ և հիմք չէր տալիս սպասելու մօտալուտ վախճանի։

Այդպէս, ուրեմն, թէ իր՝ բժշկապ. Բաբայեանի տեսածը Պոլսի այցելութեան ժամանակ և թէ մեր քննութիւնը վեհափառի էջմիածին ժամանելուց մի տարի յետոյ՝ ցոյց են տալիս, որ Իզմիրլեան կաթողիկոսը ոչ մի պատճառ չունէր կասկածելու իր քաջառողջութեան մասին և հրաժարվելու այն բարձր պաշտօնից, որին հրաւիրում էր նրան համայն ազգը և որը, ի դէպս ասած, նա երկար ժամանակ տատանվում էր ընդունելու։

Բայց ենթադրենք, որ մենք բժիշկներս սխալվել ենք մեր քննութեան ժամանակ, չենք կարողացել հասկանալ նորին օծութեան հիւանդութիւնը։ Արդ՝ եթէ մենք, 5 բժշկապետներ, անկարող ենք եղել մանրամասն զննութիւնից յետոյ որոշել որևիցէ վտանգաւոր փոփոխութիւն հանգուցեալի սրտի և երակների մէջ, ինչպէս կարելի է պահանջել, որ Իզմիրլեանը, միանգամայն անտեղեակ բժշկականութիւնից, ինքը կանխապէս կարողանար որոշել իր հիւանդութիւնը և այդ հիման վրա հրաժարվէր Հայրապետական Աթոռից։

Պարզ է, որ բժշկապ. Ա. Բաբայեանի ենթադրութիւնը Իզմիրլեանի փառասիրութեան և կաթողիկոսական տիտղոսից գայթակղվելու մասին միանգամայն անհիմն է և սխալ։ Մի այդպիսի ենթադրութիւն անպատեհաբեր կարող է լինել իրան՝ բժշկապետի համար, որ վստահացել է ստուեր ձգել այն մարդու յիշատակի վրա, որի ազնուութիւնը անպայման ազատ է որևիցէ կասկածանքից։

Մենք ճանաչում ենք բժշկապ. Բաբայեանին իբրև ազգի և եկեղեցու շահերով տոգորված մի անձնուրութիւն, իբրև մի բազմամեայ եռանդոտ գործիչ։ Այդ պատճառով զարմանալով հանդերձ՝ ցաւ ենք զգում, որ նա թոյլ է տուել իրան մի այդպիսի անուղղամիտ քայլ։

Բժշկապ. Թ. Զաքարեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

✦ Ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան մէջ հանգստացուցիչ տեղեկութիւններ ստացվեցին Թէհրանից, որ պարսից կառավարութիւնը ազդվելով անգլիական դեսպանի յորդորանքներից՝ պատրաստ է բաւարարութիւն տալ ռուսական ուլտիմատումի բոլոր պահանջներին։ Համապատասխան գրան՝ կարգադրութիւն կուկարկվի ռուսաց զօրքերին կանգ առնել և առաջ չը շարժվել մինչև նոր կարգադրութիւն։

✦ «Р. Сл.»-ի թղթակիցը խօսակցեց Եփրեմի հետ. «Ես կողմակից եմ զիջումներին,—ասել է Եփրեմը,—որովհետև ոյժի դէմ չես կարող կանգնել։ Շուստերը պէտք է հեռանայ, թէև նա շատ աշխատեց Պարսկաստանի համար և նրան փոխարինել դժուար է։ Ես քաղաքականութիւնից քիչ եմ հասկանում,—վերջացրեց Եփրեմը.—ինձ համար պարզ են միայն մօտակայ կուրիքները, և նրանց համար ես միշտ կուել եմ։ Այժմ ես տեսնում եմ, որ Ռուսաստանը և Անգլիան վիրաւորիչ է Պարսկաստանին, բայց մինթէ հնար է կուել այդ երկու երկիրների դէմ»։

✦ «Times»-ը հաղորդում է, որ ռուսական պահանջների թւում իբր կայ մի կէտ մէջլիսը վերացնելու մասին։

✦ Բերլինում յուզիչ տեղեկութիւններ են բերուել բերան անցնում՝ թէ գուցէ թիւրք-ռուսական միջադէպ ծագի Պարսկաստանի առիթով։ Թիւրքիան շատպով զօրաժողով է կատարում Փոքր-Ասիայում։

✦ Թիւրքաց 5 բատալիոն դիմեցին Սալմաստ։

✦ Ներկայումս Դարդանէլի հարցի լուծումը մնում է անորոշ դրութեան մէջ, որովհետև Աւստրիան և Գերմանիան տեղեկացրին Բ. Դրան՝ թէ նրանք ոչ մի կերպ թոյլ չեն տայ վերաքննել այդ հարցը։ Միւս կողմից Ռուսաստանի այդ քայլը պաշտպանում են Անգլիան և Ֆրանսիան։

✦ Թիւրք-իտալական պատերազմի մէջ ներկայումս գործադրութեան են հանվել նամակատար վարժված շներ։

✦ Բ. Դուռը տեղեկացրեց Պետերբուրգի իր ներկայացուցչին, որ նեղուցների հարցը հանված է հերթից։

✦ Սպանական քաղաքական շրջաններում հաւատում են, որ մինիստրների խորհուրդը վճռականապէս կը մերժէ Ֆրանսիայի պահանջները էլեսարը մաքրելու և որ Ֆրանսիայից կը պահանջվեն երաշխաւորութիւններ՝ թէ Տանժէր-Թէց երկաթուղին չի ունենայ ռազմական բնաւորութիւն։

✦ Ակարգութիւնների սկզբից Չինաստանում սպանվել են 20,000 մանջուր և չինացի։

✦ «Berl. Tag.» հաղորդում է, որ գերմանական կառավարութիւնը բէյլիսատզից 70 միլիոն մարկ է խնդրելու զօրքի կազմը մեծացնելու համար։ Նոր զօրաբանակներից մէկը գտնվելու է ռուսական սահմանի մօտ։

✦ Հօմից աքսորվեցին «Рѣчь»-ի և «Рус. Мысль»-ի զինորական թղթակիցները։

✦ Պետական Դումայի անդամ կոմս Ուվարովը հարցապնդում ուղղեց Իլիոդոր աբեղայի գործողութիւնների մասին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վեկսամինսկայա փողոց, № 8.
(Կ. Չ.) 416. 100—60

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՑՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔԻՍ և ԱՂԻՔՆԵՐԻ
Ընդունելութիւնը) 10—11 ժ. առ. (երեխաների)
ամեն օր) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տէլէֆոն 388.
(Չ.ու.Կ.) 761. 100—50

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս (ՑՕՑ), միզասեռական, վենեռական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցերեկ.
ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ առ. ժ. 9—10-ը։
Սօլօլակի, Բէրուսօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տէլէֆոն № 1175.
(Հ. Հ.Կ.) 888. 100—36

ԲԺՇԿՆ. ՖԷԼԴՇԷՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Սրսկումներ, արիպէրի լուացումներ, վիրաբուժութիւն, մասսաժ, էլեքտրականութիւն։ Հիմնաւոր բուժումն սուր և խրոնիք. արիպէրի, սերմնահոսութեան, սեռական թուլութեան և անկարողութեան՝ հմուտ բժիշկ. ցուցմունքով։ Օտարերկրեայ հիւանդներին գրաւոր խորհուրդներ և բէյլիսներ (վճարը 3 ր.)։ Եկեղեցիներին ցոյց եմ տալիս հմուտ մասնագէտ բժիշկների բոլոր հիւանդութիւնների, նաև կանանց և ծննդաբեր. հիւանդ. բժիշկների։ Ծառայողներին և աշակերտ-աշակերտուհիներին բժ. օգնութիւնը մեծ զիջումով։ Իմ կազմած «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարանը», գինը 50 կօպ., կարելի է պատանդել ինձանից կամ Թիֆլիսի բոլոր հայ գրախանութներից նայօդով։ Ընդունելութիւնը՝ կանանց 2—3 ժ., տղամարդկանց 3—4 ժ. ամեն օր։ Հասցէն. Тифлисъ, Семеновская ул., № 9, Վօրոնցովի տրձանի մօտ։
(Հ.Հ.Կ.) 892. 50—34

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Եղբ. Աւաարգիսովների
այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ չափաւոր գներով։ Կատալոգներն ուղարկվում են ԶՐԻ։ Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.), Авсаркисову.
(Չ.ու.Կ.) 1045. 15—15

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ՀԱՅ-ՌՈՒՍ
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
Ց. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
Պարունակում է աշխարհաբարի լիակատար բառամթերքը և ոճաբանութիւնը։ Ունի յատուկ անունների բառարան։ Գինը 6 ր., կազմած 6 ր. 50 կ., 6 ր. 75 կ. և 7 ր.։ Նոյն հեղինակի «Ռուս-Հայ բառարան», գինը 8 ր., կազմած 9 ր.։ «Ռուսերէն դասագիրք», Ա. տարի, գինը 25 կ., Բ. տարի 40 կօպ.։
Դիմել հեղինակին՝ А. Дагбашяну, Евангуловская 8. Въ г. ТИФЛИСЪ.
ԳՈՒՄԱՐՈՎ ԳՆՈՂՆԵՐԻՆ ԶԵՂՔ։
1139. 1—1

„Գուտտենբերգ“
գրավաճառանոցում վաճառվում են՝
«Հայերը Ռուսաստանում», Մխիթար եպիսկ. . . . 80 կ.
«Պատմութիւն հայոց գրականութեան, սկզբից մինչև մեր օրերը», Վ. Փափազեանի . . 1 ր. 50 »
Շիրվանզադէ. «Քաջ» . . 1 » 50 »
» «Նամուս» . . 1 » — »
» «Ցաւագարը» . 50 »
» «Զնուզի տկանչը» 50 »
» «Արտիստը» . 25 »
«Ժողովածու երկերի», Ա. հատ. պարունակում է՝ «Հրգեհ Նութագործարանում». «Գործակատարի յիշատակարանից», «Մնամատար» և «Արտերին» . 1 » 50 »
Բ. հատ. «Նորերից մէկը», «Օրիորդ Լիզա», «Ֆարման և Ասադը», «Թանգարէն կապանք», «Տասնուհինգ տարի անցած», «Խելագարը», «Երջանիկ արաքսվածը», «Արտիտը» . 1 » 50 »
Գ. հատ. «Արէն Դիմաքսեան» . 1 » 50 »
«Պատի համար» . . . 60 »
«Եւգինէ» . . . . 50 »
«Նազանի խանում» . . 25 »
«Աշղ-Ֆիզանու երգերը» . . » 50 »
«Քեարատի և Սաղու հէքիաթը», ապարված . . . .
«Դանար-Միրզայի», Բ. տպ. . 30 »
«Աշղ-Ղարիբի հէքիաթը» . . 40 »
«Այբբենարան», պատկերազարդ . 5 »
«Քնօգոլու (Հանսն փաշայի) հէքիաթը» . . . 25 »
«Լէյլու և Մաճնունի հերքիաթը» 30 »
«Շերինի և Ֆարհատի հէքիաթը» 30 »
«Շահ Իսմայիլ և Գիւլիզար խանում», հայերէն և թիւրքերէն երգիրով . . . 30 »
«Թահիր Միրզա, Զոհրէ խանում» 30 »
«Կենդանական վէպեր», Հայկունու 30 »
«Շահզադէ-խանում և Փէրի-խանում» 30 »
Հասցէն՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ“, Г. И. Галустяну.
1134. 1—1

ՀՕՆՕՐԲԷԻ (ՏՐԻՊՊԵՐ) ԴԷՄ
Ն Ա Բ Ա Ս Ի Ա Ց
„SALO-ՊԻՀԼԻ ԻՆ“
Ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործածելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իսկականը միայն դեղագիր արկղիկներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։
Սիրամարմնական լաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատև բնոյթ ունեցող դեպքերում եւ կարճ ժամանակի բնաւացքում վերացնում է ոգ.ս ցաւերը բնաւցքի։
ՊԱՀԵՍՏՔ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պաստային սակագնով։
Գտնվում է նաև՝ Սեան Ընկերութեան Գեղային Ապրանքների մեջ։
(Կ.) (П.12474) 0 43

ԿԱՊԴԱՆԹԵԱՆ դէմ ֆրանսիական ժողովրդական միջոցը տարածելու նպատակով մենք վաճառում ենք փոքրիկ արկղներով, իւրաքանչիւրի մէջ
20 դեղհատ
Գինը 50 կոպէկ
КАСКАРА МИДИ
L Midy
1—ի հետևանքներին՝ թերթերից առաջ։ Այդ արկղիկները, նոյնպէս և 50 դեղհատ պարունակները, կարելի է ձեռք բերել բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում։
(5,29) (М. 337683) 962. 1?—5

ՀԱՅ ՕՐԻՈՐԴ
Կայսերական Երաժշտական Դպրոցն
ա ւ ա ր տ ա ծ
ՏԱԼԻՍ Է ԴԱՍԵՐ
ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ՎՐԱ
պարելի է տանել ամեն օր ցերեկ. ժամը 4—7-ը, իսկ կիրակի օրերը՝ առ. ժ. 9—12-ը։
Грибоѣдовская № 27, кв. 5.
(Հ. Կ.) 1122. 10—2

ԴԵՐԶԱԿ
ԼԵՒՈՆ ՃԷՊԷԵԱՆՑ
ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է
Դիւրցօվայա փողոց, Վրաց Ազնուական Բանկի շինութեան բակը, թատրոնի մօտ։
(Կ. Չ. ու.) 1111. 10—5

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՆՕՆԻՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Աւտոմօբիլային հաղորդակցութեան Կովկասում
ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐԻ ԶՄԵՐԱՑԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ
Նոյեմբերի 2/15-ից 1911 թ.
ԲՕՐԺՕՄԻ, ԱԽԱԼՑԽԱՅԻ և ԱԲԱՍԹՈՒՄԱՆԻ միջև։
Բորժոմից Ախալցխա մեկնումը ամեն օր, երեկ. ժամը 4-ին։
Ախալցխայից Բորժոմ մեկնումը առաւօտեան ժամը 9-ին։
Շաբաթական մէկ անգամ, ուրբաթ օրերը, աւտօմօբիլը կը դնայ մինչև Աբասթուման և կը վերադառնայ հետեւեալ օրը՝ շաբաթ, առ. ժամը 8-ին, մանելով նաև Ախալցխա առ. մօտ ժամը 9-ին։
ԳՆԵՐԸ՝ Բորժոմ—Աբասթուման՝ 5 բուբլի։
Բորժոմ—Ախալցխա՝ 3 բուբլի։
Ախալցխա—Աբասթուման՝ 2 բուբլի։
Բագաժի համար՝ ազատ արտօնեալ 1 պուդի՝ իւրաքանչիւր պուդին 50 կ.։
(Ե.Հ.Չ.Կ.) 1066. 4—1

ՑՕՊԱՑԱՒԸ ԵՒ ՈՍԿՐԱՑԱՒԸ,
եթէ մրսելուց են առաջացել, բժշկվում են
ՀԱՐԱՒԱՅԻՆ ՀԵՂՈՒԿՈՎ—
ՄԱԳՕ
Փորձված միջոց քրոնիկական և սուր ցաւերի դէմ։ (Պարաստ. Դրեսդում)։ Ծախվում է դեղատներում և դեղատնային շատ խանութներում։
ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Եղբ. Ն. եւ Ի. ԱՐԵՇԵՎՆԵՐ
Հասցէն՝ МОСКВА, Тверская, Настасьинскій пер., д. 7, кв. 2, отд. 32. Տէլէֆոն 286—23.
Բրոշիւրներն ուղարկվում են ձրի։ Զը բժշկվողները բժշկական վկայական ներկայացնելուց՝ իրանց փողը կարող են յետ ստանալ։
Գնները՝ առանց ճանապարհածախքի՝ մեծ սրուակը 1 ր. 50 կ.։ Ուղարկ. ենք վերադիր վճ.։
(Հ. Կ.) (М. 455916) 1124. 10—2

Бухгалтерскіе курсы
Н. В. АБРААМЯНА.
(Тифлисъ, Николаевская, 22)
Рекомендуютъ торговымъ фирмамъ, заводамъ и разнымъ промышленнымъ предпріятіямъ теоретически и практически вполнѣ подготовленныхъ БУХГАЛТЕРОВЪ, КОНТОРЩИКОВЪ, КАССИРОВЪ, КОРРЕСПОНДЕНТОВЪ. Желающихъ просятъ обращаться учредителю курсовъ лично, письменно или по телефону 744.
(Կ.Չ.ու.) 1079. 10—10

ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ
Իզմայլովսկի պր., № 27
Պարիզ 1900. ՈՍԿԷ ՄԵԴԱԼՆԵՐ Նիժնի-Նովգոր. 1896.
BEAUTÉ DU TEINT
EAU DE LYS DE NINON
ԳԼԻՅԵՐԻՆԵԱՆ ԿԱԹ—ԻՐԻՍԻ ԿԱԹ
Փափկացնում են կաշին և դարձնում նրան քնքոյշ և թաւշանման։ Գլխաւոր պահեստը. Кавказское Т-во Торговли Аптекарскими Товарами—Тифлисъ, Баку, Батумъ.
ХИМИЧЕСКАЯ ЛАБОРАТОРІЯ С.ПЕТЕРБУРГСКАЯ 10 ЗАКРѢПЛЕНО ДЕПАРТАМЕНТУ ТОРГОВЛИ И МАНУФАКТУРЪ
526. 7—7

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.